

## ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՄ

### Ա. Գ. ԵՌԴՈՒՐՅԱՆ

Տնտեսավարման շուկայական հարաբերությունները կազմակերպություններում նորամուծությունների իրականացման առանձնահատուկ նախադրյալներ են ստեղծում՝ կապված տնտեսական մրցակցության ուժեղացման, արտադրական ռեսուրսների խնայողաբար օգտագործման, ֆինանսական կայունության ապահովման հետ: Նման պայմաններում արտադրության պրոցեսում նորամուծությունների զարգացման անհրաժեշտություն է ծագում, որն ուղեկցվում է տնտեսական այնպիսի հետևանքներով, ինչպիսիք են թողարկման որակի բարձրացումը, արտադրական ծախսերի կրճատումը, իրացման ծավալների ընդլայնումը և, վերջին հաշվով, կազմակերպությունների շահույթի ավելացումը:

Տնտեսագիտության մեջ նորամուծություն հասկացությունը սահմանելիս հիմնականում նկատի է առնվում շահույթ ստանալու միտումով գիտատեխնիկական պոտենցիալի նյութականացումը նոր արտադրատեսակների և տեխնոլոգիաների յուրացման գործընթացում: Սակայն տվյալ սահմանմանը հեղինակները ցուցաբերում են տարբեր մոտեցումներ: Օրինակ, Բ. Թվիսը նորամուծությունը դիտարկում է որպես գործընթաց, ուր գյուտարարությունը կամ գիտական միտքը տնտեսական նշանակություն է ձեռք բերում<sup>1</sup>: Ըստ Ֆ. Նիքսոնի, նորամուծությունը հանդես է գալիս որպես տեխնիկական, արտադրական և կոմերցիոն միջոցառումների այնպիսի համախումբ, որի շնորհիվ շուկային են առաջարկվում նոր արտադրական գործընթացներ և սարքավորումներ<sup>2</sup>:

Բ. Սանտոն գտնում է, որ նորամուծությունը տեխնիկա-տնտեսական այնպիսի գործընթաց է, որով գաղափարների և գյուտարարությունների գործնական օգտագործումով ոչ միայն ստեղծվում են լավագույն արտադրություններ և տեխնոլոգիաներ, այլև դրանց վաճառահանմամբ ձևավորում լրացուցիչ եկամուտ<sup>3</sup>:

Գործողության մեջ է նաև 1992 թ. Օսլոյում ընդունված նորամուծությունների սահմանման միջազգային ստանդարտը, համաձայն որի նորամուծության վերջնական արդյունքը գործնականում կիրառվող և շուկայում տեղ գտած նոր (կատարելագործված) արտադրանքը կամ տեխնոլոգիական գործընթացն է<sup>4</sup>:

Կազմակերպությունների մակարդակով նորամուծությունը իրականացվում է առավել արդյունավետ արտադրության միջոցների և կառավարման մեթոդների կիրառմամբ (տե՛ս աղյուսակ): Նորույթների ներդրումը կոչված է ապահովելու հակածախսային տնտեսավարման մեխանիզմի գործունեությունը, որն իրականացվում է առաջավոր տեխնոլոգիաների կիրառմամբ, հումքի և նյութերի, վառելիքաէներգետիկ ռեսուրսների խնայողությամբ, աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ, անթափոն արտադրությունների կազմակերպմամբ և այլն:

Գրականության մեջ երբեմն նույնականացվում են նորույթ, նորարարություն և նորամուծություն տերմինները: Սակայն նորամուծությունը նախորդ երկու երևույթնե-

<sup>1</sup> Տե՛ս Բ. Թվիս, Управление научно-техническими нововведениями, М., 1989, էջ 24:

<sup>2</sup> Տե՛ս "Инновационный менеджмент", Под ред. С. Д. Ильенковой, М., 2 000, էջ 12:

<sup>3</sup> Տե՛ս Բ. Սանտո, Инновация как средство экономического развития, М., 1990, էջ 31:

<sup>4</sup> Տե՛ս "Статистика науки и инноваций. Краткий терминологический словарь". Под ред.

րից տարբերվում է հենց գրանով, որ նորություններ պարունակելուց բացի ապահովում է նաև դրանց կիրառման և սպասման ոլորտը: Հետևաբար, նորամուծության պարտադիր պայմաններ են՝

- նորույթի առկայությունը
- շուկայում սպասման հնարավորությունը
- լրացուցիչ շահույթի ապահովման ունակությունը:

Այսպիսով, նորամուծությունները լրացուցիչ շահույթ ստանալու միտում ունեն և նպատակաուղղված են հակածախսային տնտեսական գործունեության կազմակերպմանը, իրացման շուկայում հաստատվելու նպատակով թողարկվող արտադրանքի որակի բարձրացմանը: Իրացվող արտադրանքի բարձր որակը, որը հանդես է գալիս որպես գնորդների սպառողական պահանջների բավարարման համընդհանուր ցուցանիշ, չի կարող ապահովվել առանց կիրառվող հումքի և աշխատանքի անհրաժեշտ որակական չափանիշների պահպանման, առաջավոր տեխնոլոգիաների շահագործման, թողարկման մոդեռնացման<sup>6</sup>:

### Աղյուսակ

#### Նորամուծությունների դրսևորման հիմնական ուղղությունները միկրոտնտեսական միջավայրում

| Թողարկման մոդեռնացում                  | Տեխնոլոգիական բարելավում                 | Արտադրության ավտոմատացում                  | Տնտեսավարման կատարելագործում               | Մենեջմենտի ջանքերի կազմում                    |
|--|--|--|--|---|
| նոր արտադրատեսակների թողարկում         | առաջավոր տեխնոլոգիաների ներդրում         | գործող տեխնիկայի բարելավում                | արտադրության սպասարկման կատարելագործում    | համակարգային կառավարման ներդրում              |
| արտադրանքի կոնստրուկտորական բարելավում | գործող տեխնոլոգիաների բարելավում         | արտադրական գործընթացի համալիր մեքենայացում | արտադրության մասնագիտացման ընդլայնում      | ուղղահայաց և հորիզոնական կառավարման սերտաճում |
| թողարկման որակի բարելավում             | տեխնոլոգիական նվուն համակարգերի կիրառում | արտադրական գործընթացի համալիր ավտոմատացում | նյութատեխնիկական մատակարարման կատարելավում | պարտավորությունների կրճատում                  |
| թողարկման տեսակնուր բարելավում         | գործընթացի տնտեսության ստանդարտացում     |  | իրացման շուկայի շրջանակների ընդլայնում     |   |

Արտադրության կառավարման և կազմակերպման կատարելագործումը նույնպես ընդգրկում է այնպիսի կարևորագույն նորամուծություններ, ինչպիսիք են՝ աշխատանքի արդյունավետ կազմակերպման ընդլայնումը, նյութատեխնիկական մատակարարման բարելավումը, ինֆորմացիոն տեխնոլոգիաների լայնածավալ կիրառումը, տրնտեսական կառավարման կատարելագործումը, շուկայի հետազոտման զարգացումը, որոնք վերջին հաշվով ուղղված են տնտեսավարման արդյունավետության բարձրացմանը:

Միկրոտնտեսական մակարդակով նորամուծական գործընթացի թվարկած դրսևորումների հիման վրա կարելի է եզրահանգել, որ *նորամուծությունը էական ֆինանսավորում պահանջող և հաստատուն դիվիդենդներով հատուցվող այնպիսի գործընթաց է, որի արդյունքների վաճառահանմամբ ապահովվում է տնտեսավարման երկարաժամկետ արդյունավետությունը:*

Հետևաբար, անհրաժեշտ ենք համարում ընդգծելու միկրոտնտեսական մակարդակով նորամուծական գործընթացի իրականացման հետևյալ առանձնահատկությունները.

1) նորամուծությունը համակողմանի գործունեություն է, որը արտադրական ու տեխնոլոգիական գործընթացից բացի՝ ներառում է նաև մատակարարման ու սպասման ոլորտները,

<sup>6</sup> Տե՛ս A. H. Фоломьев, Э. А. Гейгер, Менеджмент инновации, М., 1997, էջ 31:

2) նորամուծական ծրագրերի իրականացումը հիմնականում ուղեկցվում է էական ֆինանսական ներդրումներով, և, որպես կանոն, կազմակերպության սեփական միջոցներից բացի հաճախ պահանջում են նաև մասշտաբային փոխառություններ և լիզինգ,

3) նորամուծության արդյունքները վաճառահանվում են շահույթ ստանալու նպատակով և այդ իսկ պատճառով ապահովվում է իրացման շուկայով,

4) նորամուծական գործընթացի ծախսահատույցը ժամանակագրական տեսանկյունից տևական բնույթ է կրում և ապահովվում է նորամուծություններից ձևավորվող երկարաժամկետ դիվիդենդներով,

5) նորամուծության ծախսերը, ինքնափոխհատուցումից բացի, հիմնականում ապահովվում են նաև տնտեսավարման երկարաժամկետ արդյունավետությամբ:

Հանրապետությունում ընթացող տնտեսական բարեփոխումների շրջանակներում ինովացիոն ծրագրերի իրականացմանը հիմնականում խոչընդոտում են հետևյալ գործոնները:

**1. Կազմակերպություններում նորամուծական ծրագրերի ֆինանսավորման աղբյուրների խիստ պակասը:** Նորամուծական ծրագրերի ֆինանսավորման կենտրոնացված աղբյուրները շուկայական հարաբերությունների զարգացման հետ մեկտեղ խիստ կրճատվում են, որը պայմանավորված է տնտեսավարման կենտրոնացված կառավարման համակարգի թուլացմամբ:

Տնտեսավարման անցման շրջանում կազմակերպությունները զգում են ֆինանսական ռեսուրսների խիստ պակաս, քանի որ այդ գործընթացը, կապված տնտեսական բարեփոխումների հետ, որոշակիորեն ենթադրում է երկարամյա տնտեսական գործընկերների կորուստ և հետևաբար անցյալում վստահություն շահած մատակարարների և գնորդների կապերի խզում: Նման պայմաններում դժվարություններ են ծագում իրացման շուկաներ «ներխուժելու» և կայուն եկամուտներ ապահովելու ուղղությամբ: Մյուս կողմից՝ վստահություն շահած մատակարարների կորստով նեղանում է պարտավորության սկզբունքով կատարվող հումքի և նյութերի ձեռքբերումը, որն իր հերթին նույնպես առաջացնում է դրամական միջոցների դեֆիցիտ:

Նոր տնտեսական հարաբերությունները հիմնականում բացառում են նորամուծությունների իրականացման նպատակով անհատույց բյուջետային հատկացումներն ու կենտրոնացված կապիտալ ներդրումները, քանի որ ֆինանսավորման աղբյուրների կազմում զերակշռում են կազմակերպությունների սեփական միջոցները և փոխառությունները, որոնցից կատարվող հատկացումների չափերը ուղղակիորեն կապվում են տեխնիկական նորույթների ներդրումից ակնկալվող տնտեսական արդյունքների հետ: Բացի այդ, կազմակերպությանը տրամադրված բանկային վարկերն ու փոխառությունները սահմանված ժամկետում ենթակա են վերադարձման, որն իր հերթին խոչընդոտում է հանրապետությունում թանկարժեք և երկարաժամկետ նորամուծական ծրագրերի իրականացմանը<sup>6</sup>:

**2. Անցման շրջանի անկայուն տնտեսավարման մթնոլորտում գործող կազմակերպությունների ձգտումը արագահատույց և փոքրածավալ ներդրումների:** Տնտեսավարման շուկայական հարաբերություններին անցնելու շրջանում կազմակերպությունները ձգտում են իրագործել ոչ թե արմատական, այլ այնպիսի մասնակի նորամուծական ծրագրեր, որոնց հատուկ չեն իրականացման թանկարժեքությունը և դիսկի բարձր աստիճանը: Այդ իսկ պատճառով նախապատվությունը տրվում է արագ հատուցվող և փոքրածավալ ինովացիոն միջոցառումների իրականացմանը, որն էլ իր հերթին յուրօրինակ ազդեցություն է թողնում տեխնիկական նորույթների ներդրման գործընթացի վրա՝ հիմնականում զարգացնելով տեխնիկական վերազինման փուլային կամ «թռիչքաձև» տնտեսական ստրատեգիան<sup>7</sup>:

Այսպիսի արտադրության առանձին օղակների մասնակի վերափոխումներով ոչ թե «տնտեսվում են» նորամուծությունների իրականացման համար պահանջվող միջոց-

<sup>6</sup> Տե՛ս Մ. Ս. Մելքոնյան, *Ձեռնարկատիրություն և ներդրումներ*: Արդի հիմնախնդիրները, Եր., 1998, էջ 45:

<sup>7</sup> Տե՛ս Գ. Վ. Ավագյան, *Ինովատիցիաների խթանման ֆինանսական լծակները անցման էկոնոմիկայում*, «Էկոնոմիկա», 1997, № 4-6, էջ 37:

ները, այլ խախտվում են կազմակերպությունների մակարդակով նորամուծությունների դրսևորման համամասնությունները: Լայնածավալ նորամուծական միջոցառումների բացակայության պայմաններում զգալիորեն կրճատվում է կազմակերպություններում տեխնիկական նորությունների ներդրման արդյունավետության աստիճանը:

**3. Կազմակերպություններում նորամուծությունների իրականացումն ապահովող գիտատեխնիկական բազայի անբավարարվածությունը:** Ի տարբերություն նորարարությունների, նորամուծական ծրագրերի իրականացումը պահանջում է խոշոր չափերի ֆինանսական ներդրումներ, որը ոչ բոլոր կազմակերպությունների համար է իրագործելի: Հատկապես դա վերաբերում է անցման շրջանում ստեղծվող մեծաքանակ փոքր և միջին ձեռնարկություններին, որոնց հատուկ են գիտատեխնիկական կադրային բազայի և ֆինանսավորման աղբյուրների անբավարարվածությունը: Որպես կանոն՝ նման ձեռնարկությունների տեխնիկական զարգացումը իրագործվում է նյութատեխնիկական և ֆինանսական ոչ լիարժեք պայմանների ապահովմամբ, որը և խոչընդոտում է արտադրությունում թանկարժեք կամ երկարատև հատուցվող նորամուծությունների իրագործմանը<sup>8</sup>:

**4. Խոշոր կազմակերպությունների կողմից դեռևս որոշակի արտադրատեսակների մոնոպոլ թողարկման և իրացման առկայությունը:** Տնտեսավարման շուկայական համակարգի ձևավորման շրջանում խոշոր կազմակերպություններում հնարավորություն է ստեղծվում լրացուցիչ եկամուտ ստանալու ոչ այնքան արտադրության տեխնիկական վերազինումից, որքան թողարկվող արտադրանքի տեսականու միտումնավոր տեղաշարժերից և վաճառահաման գների անհիմն բարձրացումից<sup>9</sup>: Հետևաբար, ապահովելով որոշակի արտադրությունների մոնոպոլիան, ձեռնարկությունները ձգտում են եկամուտներ ստանալ ոչ թե իրենց տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման, այլ գնորդների հաշվին, որն էլ իր հերթին չի խթանում արտադրության մեջ նորամուծական ծրագրերի ներդրմանը:

Օուկայական հարաբերությունների հետագա զարգացման ընթացքում սպառողների հաշվին տնտեսական դիվիդենդներ ստանալու պրակտիկական աստիճանաբար սպասում է իրեն, քանի որ ուժեղանում է տնտեսական մրցակցությունը, և շահույթի աճի հիմնական աղբյուր արդեն հանդես է գալիս մրցողունակ արտադրատեսակների իրացումը, որոնց թողարկմանը մեծապես նպաստում է կազմակերպություններում նորամուծությունների պարբերաբար իրականացումը:

Տնտեսական մրցակցությունը, թույլ չտալով սպառողների հաշվին օգուտների ստացումը, միաժամանակ խթանում է տեխնիկական վերազինման այնպիսի միջոցառումների ակտիվացմանը, որոնք նպաստում են լրացուցիչ շահույթի ձևավորմանը՝ ի հաշիվ արտադրական ծախսերի կրճատման, թողարկման որակի բարձրացման և իրացման շուկաների ընդլայնման:

**5. Երբեք և արտաքին շուկաներում հայրենական կազմակերպությունների զգալի մասի անմրցունակությունը:** Նորամուծական ծրագրերի իրականացման հուշահաճախ անխապայամաներից է սպասվող արդյունքների վաճառահանումն ու շահաբեր իրացումը: Հետևաբար, ցանցած ծրագրի արդյունավետությունը բնորոշվում է նաև իրացման շուկաներում կազմակերպությունների դիրքորոշմամբ և մրցունակությամբ<sup>10</sup>:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետության արդյունաբերության առաջատար ճյուղերը հիմնականում իրենց թողարկած արտադրանքն իրացնում են երբեք շուկայում: Միայն սննդի և թանկարժեք մետաղների վերամշակման արտադրանքի գծով են նկատվում արտահանման որոշակի միտումներ, որոնք, սակայն, նույնպես հստակ դիրքորոշում չունեն դեպի արտաքին շուկա:

<sup>8</sup> Տե՛ս Գ. Գ. Խանիկյան, ՀՀ գիտատեխնիկական ներուժի բարեփոխումների ուղղությունները, «Էկոնոմիկա», 1996, No 1-3, էջ 38:

<sup>9</sup> Տե՛ս Գ. Ս. Ղազարյան, Վ. Գ. Գրիգորյան, Գիտահետազոտական ստորաբաժանումների սեփականաշնորհման շուրջը, «Էկոնոմիկա», No 7-9, 1996, էջ 58:

<sup>10</sup> Տե՛ս Գ. Ե. Կիրակոսյան, Օուկայի հավասարակշռվածությունը, «Էկոնոմիկա», 1996, No 4-6, էջ 27:

Հուսադրող չէ իրավիճակը նաև հանրապետության ներքին շուկայում, երբ հրատարողունակության դաշտում գերակշիռ մաս է կազմում ներմուծվող արդյունաբերական արտադրանքը:

Հետևաբար, նորամուծությունների իրականացմանը լրացուցիչ խոչընդոտ է հանդիսանում նաև դրանցից ակնկալվող արդյունքների իրացման շուկաների ապահովման խնդիրը, որը արտաքին ուժեղ մրցակցության պայմաններում դառնում է դժվարամատչելի:

**6. Նորամուծություններ իրականացնող կազմակերպությունների նկատմամբ հարկային արտոնությունների անբավարարությամբ:** Նորամուծական ծրագրերի խրախուսման նպատակով հանրապետությունում չի իրականացվում հստակ հարկային քաղաքականություն, քանի որ գործող հարկային օրենսդրությամբ արտոնություններ չեն նախատեսված նորամուծություններ իրականացնող կազմակերպությունների նկատմամբ<sup>11</sup>:

Թվարկած խոչընդոտները բնավ էլ բացարձակ չեն արգելակում կազմակերպությունների մակարդակով նորամուծությունների զարգացումը, քանի որ դրանց հակազդում են տնտեսական մրցակցության ներկայիս պահանջները: Նորամուծական միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը առաջին հերթին թելադրվում է շուկայական մրցունակության պահանջով, երբ տնտեսավարման հաջող ընթացքի ապահովման նպատակով տարվում է արտադրանքի գների իջեցման, որակի բարձրացման, արտադրության հակաձախսային և ֆինանսական կայունության ապահովման քաղաքականություն: Բացի այդ, հանրապետությունում դեռևս առկա է բարձրագույն կրթությամբ աշխատուժի բարձր տեսակարար կշռի, ինժեներատեխնիկական և տնտեսագիտական կրթությամբ մտավորականության բանակի հիման վրա ձևավորված նորությունների մշակման և ներդրման էական պոտենցիալ, որի արդյունավետ օգտագործումը զգալիորոն կխթանի նորամուծությունների իրականացմանը:

Հարկ է նշել նաև, որ շուկայական տնտեսավարման պայմանների զարգացմանը զուգընթաց՝ ձեռնարկությունների մակարդակով նորամուծական ծրագրերը չեն կարող լիովին ապակենտրոնացված իրականացվել, որը պայմանավորված է մի շարք գործոններով:

Այսպես, պետությունն իր շահերն ունի որոշ նորամուծական ծրագրերի իրականացման ուղղությամբ՝ կապված սոցիալական, բնապահպանական և ռազմական խրնդիրների լուծման հետ, որոնք քիչ են հետաքրքրում առանձին ձեռնարկությունների: Բացի այդ, մակրոտնտեսական մասշտաբով շուկայական առաջարկի և պահանջարկի հաշվեկշռի ապահովման միտումով պետությունը հաճախ ինքն է միջամտում որոշ ճյուղերում խոշոր մասշտաբի ինովացիոն ծրագրերի իրականացման խթանմանը:

Այսպիսով, հանրապետությունում առկա նորամուծական քաղաքականության վերլուծությունը ցույց է տալիս, որ շուկայական տնտեսական հարաբերությունների հետագա հաստատմանը զուգընթաց՝ կազմակերպություններում նորամուծություններն արգելակող երևույթները վերացնելիս հանրապետությունում պարարտ հող կստեղծվի ներդրումային քաղաքականության ուղղությամբ և տնտեսական մրցակցության, և որոշ դեպքերում էլ՝ պետական հովանավորության պայմաններում խթանիչ նախադրյալներ կստեղծվեն միկրոտնտեսական մակարդակով շահաբեր նորությունների լայնածավալ ներդրումների համար:

**А. Г. ДЖУГУРЯН - Принципиальные особенности осуществления инноваций в РА.** В статье выявляются особенности микроэкономической среды в Республике Армения и на этой основе классифицируются специфические предпосылки развития инноваций. Рассматриваются также отрицательные и положительные факторы, влияющие на развитие инновационных процессов на предприятиях, и даются рекомендации по проведению нововведений в период переходной экономики.

<sup>11</sup> Տե՛ս Գ. Վ. Ավագյան, նշվ. աշխ., էջ 31: